# ՆԿԱՐԻՉ ԱԲՐԱՀԱՄ ԳՈՒՐԳԵՆՅԱՆ

Վեհափառ Հայրապետի հրավերով վերջերս Մայր Աթոռ ժամանեց սփյուռքահայ ծանոթ նկարիչ-արվեստագետ Աբրահամ Գուրգենյանը։

Նկարիչ Աբրահամ Գուրգենյանը ծնվել է 1918 թվականին Իրանի Թեհրան քաղաքում։

Մանուկ հասակից որբանում է և ուղարկվում Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքը՝ որպես գիշերօթիկ ուսանող, ուր սովորում է 9 տարի։ Ուսումն ավարտելուց հետո վերադառնում է



Թեհրան, աշխատում է լուսանկարչի մոտ որպես ռետուշյոր, զբաղվում է նկարչությամբ

*և հայկական ու պարսկական մանրանկարչության ուսումնասիրությամբ։*

*Ինքնաշխատությամբ, իրանական և հայ արվեստի սիստեմատիկ ուսումնասիրությամբ, նա խորանում է իր մասնագիտության մեջ, ուսումնասիրում է իրանական և հայկական կենցաղային սյուժեներ, կազմակերպում է իր ստեղծագործությունների ցուցահանդեսը։ Հատկապես աշխատում է Օմարխայամի, Սաադիի, Բաբա-Թահիրի, Նիզամու, Սայաթ-Նովայի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունների նկարազարդումների վրա։*

*Նա ցուցահանդես է կազմակերպում նաև Թեհրանում, Նոր-Ջուղայում։*

*Նրա տարիների իղձն է եղել իր ստեղծագործությունների ցուցահանդեսի կազմակերպումը Մայր Հայրենիքում՝ հարազատ ժողովրդի համար։ Եվ նա այդ մտածումով էլ եկել է Հայրենիք, Վեհափառ Հայրապետի հրավերով։*